# ԿՐՕՆԱԿԱՆ

## Հայոց Ազգի Դարձը ի Քրիստոնէութիւն

( Շարունակութիւն 1 )

Եդեսիոյ պատմութիւնը կ'աւանդէ մեզ, որ Աբգար Հայոց Թագաւոր Արշամայ որդին Արշակունեան ցեղէն երկու տարիով յառաջ կ'թագաւորէր Հայոց և Ասորւոց 2. իւր հօր աթոռը յԵդեսիա ՚ի միջագետս, երբ որ Քրիստոս ծնաւ յամի աշխարհի 4000. ըստ ժամանակագրաց և՝ Օգոստոս կայսեր քառասներորդ տարին, որ Հայոց թագաւորութիւնը ևս այս թուականին Հռովմայեցւոց հարկատու արար ինչպէս կ'վկայէ Խորենացին ևս Գիրք Բ. գլ. ԻԶ:

Աբգար իր թշնամիները Պիղատոս, Հերովդէս Անթիպաս և սորա եղբայրը Փիլիպպոս և Լուսիանոս սուտ հանելու համար, դեսպաններ կ'ուղարկէ Հռովմայեցւոց Մարինոս անուն հազարապետին, որ Ասորւոց և միջագետաց երկրին վրայ Հռովմայ կայսեր հազարապետն էր և այս ժամանակ կ'նստէր ՚ի միջագետս՝ Ելևթերուպօլիս քաղաքը. 3. որպէս զի նորա ձեռքով իր վրայ եղած ամբաստանութիւնը՝ սուտ հանէ կայսեր մօտ.

Դեսպանները դառնալու ժամանակը կ'երթան յԵրուսաղէմ զՔրիստոս տեսնելու, "վասն լրոյ համբաւոյ սքանչելագործութեանցն" կ'գրէ Խորենացին, որում և ականատես լինելով, դարձան Աբգարու պատմեցին.

Թագաւորը որ եօթը տարի է հետէ հիւանդացած էր "չարաչար ցաւով" և երբէք բժշկութիւն չէ՛ր գտներ, Քրիստոսի հրաշագործութեանցը սրտանց հաւատալով, բերանով ևս խոստովանեցաւ զՔրիստոս որդի Աստուծոյ և ասաց, "Այն զօրութիւնք ո՛չ մարդոյ են՝ այլ Աստուծոյ". ուստի և հաստատուն հաւատով հաւատաց, որ Քրիստոս զինքը կարող է բժշկել, և այս հաւատքով նամակ գրեց Քրիստոսի, զոր Խորենացիէն առնելով տեղս կ'դնենք.

"Աբգար Արշամայ իշխան աշխարհի առ Յիսուս փրկիչ և բարերար, որ երևեցար յաշխարհի Երուսաղէմացւոց՝ ողջոյն.

"Լուեալ է իմ վասն քո, և վասն բժշկութեանդ որ լինին ՚ի ձեռս քո առանց դեղոց և արմատոց, զի որպէս ասի, տաս դու կուրաց տեսանել և կաղաց գնալ և

1. Թիւ Ա.

2. Աբգարու Ասորւոց ևս թագաւոր լինելուն կ'վկայէ Միխայէլ Ասորի պատմագիրը. Գիրք ա.

3. Ելևթերոս քաղաքը Փիւնիկէի, Պաղեստինոյ, Ասորւոց և Միջագետաց երկրի մէջն է.

զբորոտս սրբել և զայսս պիղծս հանել, և որ միանգամ չարչարեալ են երկար հիւանդութեամբ՝ բժշկես. դու և զմեռեալս յարուցանես: Եւ իբրև լուայ վասըն քո զայս ամենայն, եդի ՚ի մտի իմում մի յերկուց աստի, կամ թէ դու Աստուած իցես իջեալ յերկնից գործես զայդ, կամ թէ որդի իցես դու Աստուծոյ՝ և զայդ առնես: Արդ վասն այնորիկ գրեցի ես առ քեզ՝ աղաչել զքեզ, զի աշխատ լինիցիս և եկեսցես առ իս և բժշկեսցես հիւանդութիւնս զոր ունիմ ես. Նաև լուայ զի հրէայք տրտնջեն զքէն և կամին չարչարել զքեզ, բայց քաղաք մի փոքրիկ և գեղեցիկ է իմ, և բաւական է մեզ երկոցունցս":

Թուղթը տանողները, որոնք նոյն դեսպաններն էին Մարիհաբ Աղձնեաց բդեշխը, Շամշագրամ Ապահունեաց Նահապետը և Անան Թագաւորին հաւատարիմը, կ՚հանեն Երուսաղէմ Քրիստոսի նոյն քաղաքը մտած օրը, բայց իրենք չ՚կարողանալով անձամբ Քրիստոսի տալ Թուղթը, Փիլիպպոսի կ՚խօսին, Փիլիպպոսն ալ Անդրէասին. Անդրէաս և Փիլիպպոս ասեն ցՅիսուս. "Զայս վկայէ Աւետարանական բանն, կ՚գրէ Խորենացին 1. Յիսուս Թուղթը առնելով, մեծ ուրախութիւն ցոյց տուաւ յանձին, "Այժմ փառաւորեցաւ որդի մարդոյ" 2:

Եւ որքան որ հրէից առաքեալ էր, այսու ամենայնիւ Աբգարու դարձը ուրախութեամբ ընդունելով, Թովմաս Առաքելոյն ձեռքովը պատասխան գրեց Աբգարու, խոստանալով որ իր Աշակերտներէն մէկը կ՚ուղարկէ իր համբարձմանէն ետքը ըստ վկայութեան Խորենացւոյն՝ օրինակ զայս:

"Երանի՛ իցէ այնմ որ հաւատայ յիս իբրև ոչ իցէ նորա տեսեալ զիս. զի գրեալ է վասն իմ այսպէս, զի որք տեսանեն զիս, ոչ հաւատասցեն յիս, և որք ոչն տեսանեն՝ նոքա հաւատասցեն և կեցցեն, իսկ վասն այնր զի գրեցեր դու առ իս, գալ ինձ առ քեզ, արժան է ինձ կատարել աստ զամենայն ինչ վասն որոյ առաքեցայ ես: Եւ իբրև կատարեցից զայս, ապա համբարձայց առ այն՝ որ առաքեաց զիս. և յորժամ համբարձայց, առաքեցից զմի յաշակերտաց աստի իմոց, զի զցաւս քո բժշկեսցէ և զկեանս քեզ և որոց ընդ քեզ են՝ շնորհեսցէ" 1:

Դեսպանները դարձան Եդեսիա և փրկչական նամակին հետ բերին Աբգարու Քրիստոսի կենդանագիր պատկերն էլ դաստառակի վրա առած, որու համար Խորենացին կ՚վկայէ." Զայս Թուղթ

1. Խորեն. Գիրք Բ. գլ. լ:
2. Յովհ. ժբ. 20—24. Նոնայ վարդապետն Ասորի Յով. Աւետարանի: Էին ոմանք ի հեթանոսաց ելելոց անդր (յԵրուսաղէմ,) բանի մեկնութեան մէջ կգրէ թէ, Սոքա էին առաքեալք յԱւգար Արքայէ առ Քրիստոս. գլ. ժբ.

1. Խորեն. Գիրք Բ. գլ. լբ.

երեր Աննան սուրհանդակ Աբգարու, ընդ որում և զկենդանագրութիւն փրկչական պատկերին". Գիրք. Բ. 106.

Իսկ երբ որ Քրիստոս տէրն մեր երկինք ամբարձաւ, Թովմաս առաքեալը ինչպէս որ Քրիստոսի կողմէն Աբգարու թուղթ գրելու ժամանակ պատուէր առած էր 'ի նմանէ, զԹադդէոս առաքեալը Եդեսիա կ'ուղարկէ 'ի բժշկութիւն Աբգարու և 'ի քարոզութիւն Աւետարանին։

Թադդէոս առաքեալ յԵդեսիա կուգայ և կ'իջնէ Տուբիա անունով իշխանին տունը որ Բագրատունեաց ցեղէն էր. Առաքելոյն գալուստը քաղաքը կ'տարածուի, Աբգար իմանալով որ Առաքեալը այն մարդը պիտի լինի որ Քրիստոս խոստացել էր ղրկելու իրեն, շուտով կանչել տուաւ նորան։

Թադդէոս առաքեալ Թագաւորի մօտ կ'երթայ, և ձեռքը Քրիստոսի անուամբ նորա վրա դնելով, կ'բժշկէ. ապա Թագաւորական հրամանաւ քաղաքին մէջ քարոզութիւն սկսելով, բոլոր հիւանդները ու տկարները կ'առողջացնէ և զամենքը կ'դարձնէ 'ի քրիստոնէութիւն։

Աբգար և բովանդակ քաղաքը հաւատացին ու մկրտուեցան, մեհեանները փակուեցան, և որչափ որ խորաններու և սիւներու վրա պատկերներ կային՝ ծածկեցին, որոց տեղը Եդեսիայի մէջ Հայոց քրիստոնէութեան հաւատոյ առաջին եկեղեցին հիմնեց Ս. Առաքեալը, որ յետոյ սուրբ Աստուածածնի անուամբ կոչուեցաւ, ուր և օրըստօրէ հաւատացեալք կ'բազմանային։

Եդեսիա քաղաքի հաւատացելոց մէջէն սուրբ Առաքեալը Թագաւորի խոյրարարն էլ մկրտելով, անունը Ադդէ կոչեց և ձեռնադրեց նորան քաղաքի վրա իրեն տեղը Քրիստոսի նորադարձ եկեղեցին հովուելու, ու ինքը Աբգարու հրովարտակով Շաւարշան քաղաքը գնաց քարոզութեան Սանատրուկ Թագաւորին քով որ Աբգարու տէրութեանը կառավարիչ և զօրաց հրամանատարն էր։

Հայոց ազգի դարձը 'ի քրիստոնէութիւն ընդ ձեռն Թադդէոս առաքելոյն՝ Խորենացին այսպէս կ'նկարագրէ ըստ իւր համառօտագրութեան. "Բայց յետ համբառնալոյ Փրկչին մերոյ՝ Թովմաս առաքեալ մի յերկոտասանիցն՝ առաքեաց մի յեօթանասնից անտի զԹադդէոս 'ի քաղաքն Եդեսիա՝ բժշկել զԱբգար և աւետարանել ըստ բանին տեառն. որոյ եկեալ 'ի տուն Տուբիայ իշխանի Հրէի զոր ասեն լինել յազգէն Բագրատունեաց... և ել համբաւ նորա ընդ ամենայն քաղաքն, լուեալ Աբգարու՝ ասէ, նա է վասն որոյ գրեացն Յիսուս, և իսկոյն կոչեաց զնա. Իսկ եղև 'ի մտանելն Թադդէի, տեսիլ մեծ երևեցաւ Աբգարու յերեսն Թադդէի, և յարուցեալ 'ի գահոյիցն անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց և երկիր եպագ նմա, և զարմացան ամենայն իշխանքն

որ շուրջն կային. զի ոչ գիտացին զտե֊սիլն. Ասէ ցնա Աբգար, եթէ դու իցես արդարև աշակերտ օրհնելոյն Յիսուսի, զոր առաց առաքել ինձ այսր, և կարող իցես բժշկել զցաւս իմ, պատասխանի ետ Թադդէոս, եթէ հաւատասցես 'ի Քրիստոս Յիսուս որդին Աստուծոյ, տացին խնդրուածք սրտի քո. ասէ ցնա Աբգար, ես հաւատացի 'ի նա և 'ի Հայրն նորա. վասնորոյ և կամեցայ առնուլ զզօրս իմ և գալ կոտորել զհրէայս, որ խաչեցին զնա եթէ ոչ էր արգելեալ վասն թագաւորութեան Հռովմայեցւոց":

"Նոյն յայսմ բանէ սկիզբն արարեալ Թադդէի աւետարանեաց նմա և քաղաքի նորա, և եդեալ ձեռն 'ի վերայ՝ բժշկեաց զնա, և զԱբդիու պատագրոս իշխան քաղաքին և պատուական յամենայն տանն Աբգարու. նաև զամենայն որք էին 'ի քաղաքին հիւանդք և ախտաժէտք՝ բժշկեաց և հաւատացին ամենեքեան և մկրտեցաւ ինքն Աբգար և ամենայն քաղաքն, և ըղդուրս տաճարաց կռոցն փակեցին, և որք 'ի վերայ Բագնին և սեանն կային պատկերքն՝ ծածկեալ պատեցին եղեգամբք, և ոչ զոք ածէր բռնութեամբ 'ի հաւատըս. բայց օրըստօրէ յաւելեալ 'ի հաւատացեալսն՝ բազմանային":

"Իսկ առաքելոյն Թադդէի զԱյրաքար ոմն մետաքսագործ մկրտեալ և անուն կոչեցեալ Ադդէ, ձեռնադրեալ 'ի վերայ Եդեսիոյ, փոխանակ իւր թողու առ Աբքայի, և ինք առեալ զհրովարտակ յԱբգարէ, զի ամենեքին լուիցեն աւետարանին Քրիստոսի, գայ առ Սանատրուկ քեռորդի նորին զոր կարգեալ էր 'ի վերայ աշխարհին և զօրացն":

Եւսեբիոս եկեղեցական պատմիչն ևս Հայոց քրիստոնէութեան համար վկայութիւն կ'տայ, զոր Եդեսիա գտնուած գըրքերէն կ'առնու. "Օլ Թովմաս զԹադդէոս իբրև 'ի զօրութենէ Աստուծոյ առաքեաց յՈւրհա (Եդեսիա) լինել նմա քարոզ և աւետարանիչ վարդապետութեան Քրիստոսի. զի 'ի գրոց անտի որ գտաւ անդ (յԵդեսիա) ցուցաք յառաջ քան զփոքր մի: Իսկ իբրև եհաս նա յաշխարհն այն, զԱբգար բժշկեաց բանիւ Քրիստոսի, և զամենայն մարդիկ աշխարհին զարմացոյց սքանչելի զօրութեամբքն՝ զոր գործեաց ի կատարեալ":

Շարունակելի